# Washington Post-ը հեռացնում է լրագրողին գրագողության համար

March 18, 2011
Washington Post-ը հեռացնում է լրագրողին գրագողության համար

«The Washington Post» թերթի խմբագրությունը չորեքշաբթի հեռացրել է իր ամենաստիտղոսակիր լրագրողներից մեկին այն բանից հետո, երբ խմբագիրները պարզել են, որ լրագրողի վերջին երկու լրատվական հոդվածների հիմնական մասը առանց հղումների վերցված է ուրիշ թերթից:

«The Washington Post»-ում երկար ժամանակ աշխատող հետաքննող լրագրող Սարի Հովիցը հեռացվել է երեք ամսով «Arizona Republic» թերթում տպագրված հոդվածների պարբերությունների գրագողության համար: Հոդվածները Ջարեդ Լի Լաֆների գործով հետաքննության վերաբերյալ էին, ով մեղադրվում է հունվարին Տուքսոն քաղաքում սենատոր Գաբրիել Գիֆֆորդսի և 18 այլ մարդկանց վրա կրակ բացելու մեջ:

Հովիցը կրկնօրինակել էր «Republic»-ում տպագրված հոդվածի երկու պարբերությունները քաղաքացիական օրենքների մասին իր հոդվածի մեջ, որը հայտնվել էր «Post»-ի կայքում մարտի 4-ին: Նրա երկրորդ հոդվածը, որը տպագրվել էր մարտի 10-ին, պարունակում էր 10 պարբերություն «Republic»-ի հոդվածից Լաֆների տան որոնումների մասին: Երկու պատմություններն էլ տպագրվել են թերթում համացանցում հայտնվելու հաջորդ օրը:

«The Washington Post»-ը չորեքշաբթի օրը իր կայքում, իսկ հինգշաբթի օրը նաև թերթի խմբագրի սյունակում ներողություն է խնդրել ընթերցողներից:

**Աղբյուր:** The Washington Post **[1]**

## Read also

Turkey: Prosecutor’s Demand for Journalists’ Photos Enrages Associations [2]
Iranian actor arrested en route to women's World Cup [3]
To Buy or Not to Buy a New TV set? Armenian TV Viewers will Not Stay Away from Digitalization Process [4]
Georgian papers go blank in protest against photographer 'spies' arrest [5]
Criminal Case Instituted Against Georgia Embassy Employee in Ukraine [6]

**Source URL:** http://www.jnews.am/en/node/941

**Links:**
[1] http://www.washingtonpost.com/lifestyle/style/washington-post-suspends-reporter-for-plagiarizing-stories-on-tucson-shooting/2011/03/16/ABzKfHh_story.html
[2] http://www.jnews.am/en/node/1375
[3] http://www.jnews.am/en/node/1423
[4] http://www.jnews.am/en/armenia-digitalization-process
[5] http://www.jnews.am/en/node/1429
[6] http://www.jnews.am/en/node/1440